



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ, ք.Երևան, Պ թճձ՝ հ 21³ ,
Ք»ճԹ(+374 10) 54-35-03, Կ՝ չ՝ նճ (+374 10) 54-35-23

06.02.2008

Չանգվածային լրատվության միջոցներով, նաև Հանրապետության Նախագահի որոշ թեկնածուների կամ նրանց ներկայացուցիչների կողմից ասեկոսեներ են տարածվում այն մասին, որ քաղաքացիներից անձնագրային տվյալներ են հավաքվում:

Չնայած անձնագրային տվյալների հավաքագրումը չի կարող որևէ կերպ ազդել ընտրողի ազատ կամաարտահայտության վրա կամ ընտրական գործընթացի խաթարման հիմք հանդիսանալ, այդուհանդերձ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անունից դիմում են Հանրապետության ընտրողներին՝ կոչ անելով անձնագրային տվյալներով հետաքրքրվող անձանց նման անհարկի տեղեկություններ չտրամադրել:

Ընտրական գործընթացների հետ կապված անձնագրային տվյալների անհրաժեշտություն կարող է առաջանալ միայն ընտրական հանձնաժողովների անդամների կամ թեկնածուների վստահված անձանց նշանակման դեպքերում:

*Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
նախագահ Գ.Ազարյան*